Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

2017Թ. ՀՈՒՆԻՍԻ 5-7-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Վահան Մարտիրոսյան,

Սերգեյ Ավետիսյան,

Քրիստինե Բեգլարյան:

♦ **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար,

ՀՀ կառավարությանն առընթերք քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ,

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի արտաքին կապերի և ծրագրերի վարչության պետ:

♦ **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ռուսաստանի Դաշնություն՝ քաղաք Սոչի,

2017 թվականի հունիսի 5-ից 7-ը:

♦ **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով,

Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարար

♦ **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Եվրասիական տնտեսական միության անդամ - պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների 7-րդ խորհրդակցությանը, Երկաթուղային ճանապարհների համագործակցության կազմակերպության նախարարների 45-րդ նիստին և «Ռազմավարական գործընկերություն 1520» 12-րդ միջազգային երկաթուղային ֆորումին:

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Եվրասիական տնտեսական միության անդամ - պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների 7-րդ խորհրդակցության ընթացքում քննարկվել է ԵԱՏՄ անդամ-պետությունների տրանսպորտային քաղաքականության գլխավոր սկզբունքներից մեկը հանդիսացող Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության փուլերի և հիմնական ուղղությունների իրականացման միջոցառումների ծրագրի («ճանապարհային քարտեզի») նախագիծը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվեց ԵԱՏՄ օդային տրանսպորտի ոլորտում համակարգված տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և իրականացման փուլերի իրագործման 2018-2020թթ. միջոցառումների պլանի («ճանապարհային քարտեզի») նախագիծը և արձանագրային որոշմամբ այն հավանության արժանացավ:

2017թ. հունիսի 5-ին և 6-ին կայացած աշխատանքային խմբի հանդիպումների ընթացքում քննարկվեց «Նավագնացության մասին» Համաձայնագրի նախագիծը, ինչպես նաև Համաձայնագրի նախագծի վերաբերյալ Բելառուսի Հանրապետության կողմից ներկայացրած առաջարկությունները:

ԵԱՏՄ անդամ - պետությունների տրանսպորտի ոլորտի ներկայացուցիչների կողմից վերջնականացվեց Համաձայնագրի նախագիծը և պայմանավորվածություն ձեռք բերվեց հնարավորինս սեղմ ժամկետում ավարտել անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը՝ այն ստորագրելու նպատակով:

Միջոցառման առաջնային թեմաներից մեկն էր նաև ավտոմոբիլային կաբոտաժային բեռնափոխադրումների ծրագրերը:

Նիստի ընթացքում նախարար Վահան Մարտիրոսյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետությունը, օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով, արդեն լիարժեք պատրաստ է կաբոտաժային փոխադրումների իրականացմանը:

Քննարկվել են նաև տրանսպորտային համակարգերի հետագա ազատականացման հարցերը, ինչպես նաև սահմանվել ազատականացմանն ուղղված հիմնական միջոցառումները՝ ըստ տրանսպորտի առանձին տեսակների և ըստ երկրների:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են անդամ-պետություններում գոյություն ունեցող սահմանափակումներից ազատման հարցերը, ԵԱՏՄ տարածքում միասնական տրանսպորտային միջավայրի ձևավորմանը խոչընդոտող խնդիրները:

Երկաթուղային ճանապարհների համագործակցության կազմակերպության նախարարների 45-րդ նիստի և «Ռազմավարական գործընկերություն 1520» 12-րդ միջազգային երկաթուղային ֆորումի շրջամակներում քննարկվել են թվային երկաթուղու փորձը և զարգացման միտումները անդամ երկրներում, տրանսպորտի բնագավառի համար թվային նորամուծությունները, ինչպես նաև երկաթուղային տրանսպորտի կիբերպաշտպանվածությունը:

Քննարկման թեմաներից էին նաև երկաթուղային մեքենաշինությունը, շարժակազմի շուկան, ենթակառուցվածքների թարմացման հետ կապված խնդիրները և անելիքները, ինչպես նաև միջազգային բրենդի ձևավորումը:

Միջոցառման ընթացքում քննարկվեց նաև տրանսպորտային հանգույցները, երկաթուղային ուղևորա և բեռնափոխադրումները, փոխադրումների ակտիվացմանն ու անվտանգությանն ուղղված առաջնային միջոցառումները:

Նիստի կարևոր հարցերից էր՝ նոր Մետաքսի ուղին և Մետաքսի ուղու երկայնքով ենթակառուցվածքային հասանելիության բարձրացումը, ինչպես նաև երկաթուղային ճանապարհների զարգացման ազդեցությունը տարանցիկ փոխադրումների աճի վրա:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Միջոցառումների շրջանակներում երկկողմ հանդիպումներ են կայացել.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էներգետիկայի և ենթակառուցվածքների նախարար - կոլեգիայի անդամ Ա. Օ. Ժունուսովի,

Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարար Մ. Սոկոլովի,

Բելառուսի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարար Ա. Սիվակի,

Ղազախստանի Հանրապետության ներդրումների և զարգացման նախարարի տեղակալ Ռ. Սկլյարի,

Ղրղստանի Հանրապետության տրանսպորտի և ճանապարհների նախարար Ժ. Կալիլովի հետ:

- **ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

Եվրասիական տնտեսական միության անդամ - պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների 7-րդ խորհրդակցության արդյունքում հավանության արժանացավ 2018-2020թթ. օդային տրանսպորտի մաս հանդիսացող համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության իրականացման փուլերի և հիմնական ուղղությունների միջոցառումների ծրագրի նախագիծը («ճանապարհային քարտեզի»):

Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության իրականացման փուլերի և հիմնական ուղղությունների միջոցառումների ծրագրի նախագիծը նախապատրաստող աշխատանքային խմբին հանձնարարվեց մինչև 2017թ. օգոստոսի 1-ը վերջացնել միջոցառումների ծրագրի նախագծի համաձայնեցումը և այն ներկայացնել նախարարների խորհրդակցության քննարկմանը:

Ռուսաստանի տրանսպորտի նախարարությանը հանձնարարվեց նախապատրաստել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ավիացիոն միջադեպերի հետաքննության նպատակով մարմնի (հանձնաժողով) ստեղծման վերաբերյալ առաջարկություն, և արդյունքների մասին տեղեկացնել հերթական նախարարական խորհրդակցության ժամանակ:

Քննարկելով «Նավագնացության մասին» Համաձայնագրի նախագծի վերջնական տարբերակը՝ հանձնարարվեց Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էներգետիկայի և ենթակառուցվածքների նախարար - կոլեգիայի անդամ Ա. Օ. Ժունուսովին այն սահմանված կարգով ներկայացնել Միության մարմինների քննարկմանը:

Կողմերին հանձնարարվեց մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնել կաբոտաժային ավտոմոբիլային բեռների փոխադրումների ծրագրի առաջին փուլի արդյունքների մասին տեղեկատվություն:

Կից ներկայացվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների 7-րդ խորհրդակցության արդյունքում ձեռքբերված պայմանավորվածությունների վերաբերյալ Արձանագրությունները և «Նավագնացության մասին» Համաձայնագրի նախագծի համաձայնեցված տարբերակը:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

  Վահան Մարտիրոսյան

  12.06.2017թ.